ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մայիսի 8-ից 10-ը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Էդուարդ Հակոբյան, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2023թ. մայիսի 8-ից 10-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Վերականգնման վարկերի բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Գերմանահայկական հիմնադրամի (ԳՀՀ) Ծրագրի կառավարման գրասենյակի (ԾԿԳ) «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի դիտորդ խորհրդի 35-րդ և «Միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» (ԳՀՀ-ՄՓՄՁ), «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» (ԳՀՀ-ԲՖ), «Գյուղատնտեսության Ֆինանսավորում» (ԳՀՀ-ԳՖ) և «Էներգաարդյունավետության միջոցների ՄՓՄՁ ֆինանսավորում» ծրագրերի դիտորդ խորհրդի 45-րդ համատեղ նիստին՝ որպես դիտորդ խորհրդի անդամ:

5. **Քննարկված թեմաները՝**

Մայնի Ֆրանկֆուրտում կայացած ԳՀՀ ԾԿԳ դիտորդ խորհրդի նիստի շրջանակներում քննարկվեց Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ գործունեությունը. մասնավորապես, քննարկվել են Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ ծրագրերի կատարողականին առնչվող հարցեր: Հարցերը վերաբերում էին փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության, բնակարանային շուկայի կայուն զարգացման, վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտի զարգացման ոլորտներում ծրագրերին և այլն:

ԳՀՀ ԾԿԳ հիմնարկի 2022թ. և 2023թ առաջին եռամսյակի ծախսերի կատարողականը և 2022թ. տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ)

ծրագրի դիտորդ խորհրդի և «Միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» (ԳՀՀ-ՄՓՄՁ) ու «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» (ԳՀՀ-ԲՖ) և «Գյուղատնտեսության Ֆինանսավորում» (ԳՀՀ-ԳՖ) ծրագրերի դիտորդ խորհրդի հաշվետվությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ներկայացվեց «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի 1-3-րդ փուլերի ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև քննարկվեցին վերջինիս 4-րդ և 5-րդ փուլերի առաջընթացի հաշվետվությունը և դրան առնչվող մի շարք հարցեր:

Միաժամանակ ներկայացվեցին «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» ծրագրի առաջընթացի համախմբված զեկույցը, 5-րդ փուլի կարգավիճակի վերաբերյալ հաշվետվությունը, «Միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերի առաջընթացը, նշյալ ծրագրերի կատարողականի հաշվետվությունները, «Գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրի» առաջինից երրորդ փուլերի համախմբված զեկույցները, «Էներգաարդյունավետության միջոցների ՄՓՄՁ ֆինանսավորում» ծրագրերի առաջին և երկրորդ փուլերի կատարողականը և վերջինիս առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը, նշյալ բոլոր ծրագրերի համատեքստում շուկայի հիմնական զարգացումները:

Հանդիպման ավարտին ներկայացվեց Գերմանահայկական հիմնադրամի աուդիտի թիմի կողմից իրականացված աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դիտորդ խորհրդի նիստում ընդունվել են հետևյալ որոշումները՝

- «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» ծրագրի 4-րդ փուլի ներքո հիփոթեքային վարկավորման ստանդարտ տոկոսադրույքը թողնել նույն մակարդակում. Ստանդարտ Երևանի (սովորական հիփոթեքային) վարկերի համար՝ 7%, Գյուղական հիփոթեքային և Էկո Երևանի վարկերի համար՝ 6%, իսկ Էկո Մարզի վարկերի համար՝ 5.5%,

- ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրի շրջանառու ֆոնդից գործընկեր ֆինանսական հաստատություններին հատկացվելիք վարկերի տոկոսադրույքը թողնել 8.5%,

- «Գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրի» վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել նույնը՝ 6.25%-ի չափով, ինչպես նաև ծրագրի շրջանառու ֆոնդից գործընկեր

ֆինանսական հաստատություններին հատկացվելիք պայմանական վարկերի տոկոսադրույքը պահպանել՝ 7.5%-ի չափով,

- «Էներգաարդյունավետության միջոցների ՄՓՄՁ ֆինանսավորում» ծրագրի վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել նույնը՝ 7.5%:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ընթացքում ներկայացրել եմ առաջարկություններ ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունները բարելավելու ուղղությամբ՝ ներառելով ցուցանիշների պատմական դինամիկան, ներդնելով հարաբերական ցուցանիշներ ինչպես պորտֆելում յուրաքանչյուր ծրագրի դերի, այնպես էլ ծրագրերի ուղղությամբ տրամադրվող վարկերի՝ այդ ոլորտներում վարկերի ու այդ ոլորտների թողարկումների մեջ դերի ուղղությամբ: Առաջարկել եմ նաև միասնական մոտեցումներ ներդնել տարբեր ծրագրերով նախատեսվող վարկերի տոկոսադրույքների հաշվարկման և որոշման, ծրագրերի թիրախայնության բարձրացման վերաբերյալ, ինչպես նաև՝ ներդնել գործիքներ և վերլուծական մոտեցումներ ծրագրերի՝ տնտեսության ու ոլորտների վրա ունեցած ազդեցությունը չափելու ուղղությամբ, որը թույլ կտա բարձրացնել հիմնադրամի հետագա գործունեության արդյունավետությունը: Պայմանավորվել ենք հետագայում այս ուղղություններով աշխատել:

9. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

15.05.2023թ.